


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՆԱԲԻՍ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "

ՍՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու քիւ մեկ ծաւրով
Տարեկան . . 11 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոյաւ
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Իրանդիան տոհմ
20 լամպիւ

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԻ ԱՄՆԸ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵԻ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Ե

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ի

Բ. Հ Ա Տ Ո Ր Ը

Սրտասահմանի ընթերցասերներու կողմէ աշխարհահամարներու քննարկ սպասուած այս Բ. հատորն կը պատրաստուի երկստիւրու քննարկ Բ. եւ Գ. մասերը ոչ կը վերջանայ .

Ա. հատորը (Ա. մաս) կը թարգմանայ 162 երեսներէ, գին 1 ֆր. Բ. « (Բ. եւ Գ. մաս) « 432 « « 2 «

10 օրինակի դրամ դրկողը 11 օրինակ կը ստանայ .
Դիմել ի Բ Ա ի Ո ի Ն Ք ի խնայարարներուն եւ մեր ծանուցած գործակալներուն .

ՃԳՆԱԺԱՍԸ

Ռուսահայ եկեղեցիներու եւ վսեմքերու պատկանող կալուածներուն մատակարարութիւնը կայսերական հրամանաւ կը յանձնուի ռուս կրթական նախարարութեան . կոմիտէի կառավարչութիւնը իշխան կողմէն կ'ընեն անգամ թիւքս պուրկ ճանապարհորդութիւնը այս ծանր հատուածը բերաւ հայ ազգի զինուոր . Ռուսահայ գաղութներու եւ աստեղ կալուածներուն ռուս կրթական նախարարութեան յանձնուելէն, եւ հայկական բարեգործական ընկերութիւններու լուծուելէն վերջ՝ մեր եկեղեցիներու մատակարարութեան անկախութիւնն ալ ձեռքէ կ'երթայ այսօր, նաեւ մեր եկեղեցական ծէսով եւ ազգային լեզուով երգումընելու ազատութիւնն ալ կը կապուի բարձրագոյն հրամանաւ մը, ու այս ամէնը կ'ըլլայ բոլոր Հայոց սիրեցեալ Հայրիկին Հայրապետութեան օրով . որուն սզգասիրութիւնը եւ տոհմային իրաւանց նախանձախնդրութիւնը ոչ մէկ Հայու համար կասկածի տակ չէ .

Բնաւ տարակից չկայ թէ իրարու յաջորդող այս ծանր հարուածները մահու չափ դառնացուցած են Ամենայն Հայոց կաթողիկոսին սիրտը ու հոգին . նա կը տաքնապի այսօր ելը մը, հնար մը գտնելու որ վերջին մեծագոյն հարուածը գոնէ վերապահէ, բայց կը գտնէ թէ

անկարող է, անձեռնհաս է բան մը ընելու, կաթողիկոսական Աթոռէն չ'առաքելէ զատ .

Առգէն այս հրաժարի մտադրութիւնը քանի մը ռուսական եւ աստիական թերթեր հաղորդեցին . միեւնոյն ասին հաստատուած է թէ էջմիածնայ Սինոդին հինգ անգամներէն չորսը հրաժարած են, Եթէ ստուգուի կաթողիկոսին ալ հրաժարականը, չի՞ք կարծիք որ այդ պատճառով ջարդին հրամանին յետ կոչումին, չարիքը միշտ չ'որիք պիտի մնայ եւ Հայրիկ մը կաթողիկոս ունենալու վայելքէն պիտի զրկուիք, ու չի՞ք գիտեր թէ Անոր յաջորդելիք եպիսկոպոսը ի՞նչ գաղափարի ծառայող մէկն պիտի ըլլայ .

Ռուս իշխանութեան գործիք թլլալու տրամադիր եկեղեցականներ չեն պիտի մեր մէջ, ինչպէս Սինոդի անգամներէ մին, հակառակ իր չորս պաշտօնակիցներու միաժամանակ հրաժարելուն, կը շարունակէ մնալ իր պաշտօնին մէջ, համակերպելով կառավարութեան յորդ հայափնաս պահանջներուն . Այս պարագան ամենաթարմ եւ շոշափելի ու պոչացն է թէ ան պատճառ սեւագլուխներու խմբակ մը պիտի գտնուի էջմիածնայ Սինոդէ կազմելու եւ գործերը ըստ հաճուս ռուս կառավարութեան վերելու համար .

Մէկ խօսքով ծանր ճգնաժամի մը մէջ կը գտնուի մեր եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը հիւսիսային սպիտակ տըղի թա

թիւն տակ, որուն, աւաղ, արտաքին ոչ մէկ ազդեցութիւն չը ներգործեր .

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

ԹՈՒՐԿԻԱ

Մակեդոնիոյ Մանասար (Պիթոլիա) նահանգը կատարելապէս արիւնհեղութեանց թատերաձայնը մը եղած է այսօր . շատ մը լեռնաւանդաւորներ ապստամբ խուճերու ձեռքը կը գրտնուին . վերջին հետադիւր մը Սթիւպի երկաթուղին մէկ կարեւոր կամուրջին ուժանակով քանդուիլը իմացուց, հետեւապէս հազորակցութիւնները ընդհատուած են . զորքերու եւ ռազմամթերքի փոխադրութիւնը մեծ զբոսաւորութեանց կը հանդիպի . Սեւուած ճամբաներու եւ հետադարձելու վերանորոգութեան համար դրկուած գործարարները ապստամբներէ սպառնական նամակներ ընդունած են, որպէս զի չ'որոգած իրենց տեղերը վերագտնան . վերջապէս պուլկար յեղափոխական խումբերը այսօր քանի մը պիւղաճաղաքներու կը տիրապետեն, պուլկար գիւղացիք մեծ մասամբ իրենց տունները եւ ընտանիքը ձգելով գացած խումբերուն հետ միացած են . նահանգին թուրք զորքերը պաշտպանողական դիրքի մէջ մնացած են ու կը սպասեն որ Սկպանիէ եւ Սելանիկէ նոր բանակներ հասնին .

Արդէն կըսուէր թէ հունձքերը քաղելէ անմիջապէս վերջ ընդհանուր ապստամբութիւն տեղի պիտի ունենայ, այս տարածայնութիւնը չորս սպառնալիք մը կը նկատուէր եւ թուրք կառավարութիւնը կը կարծէր թէ պուլկար յեղափոխական կազմակերպութեան ուժերը ջլատուած են . բայց ընդհակառակը ըլլալով այսօր տեսաւ թէ Վերջին կազմակերպութիւնը իրեն տրամադրելի մեծ ուժ ունի . եւ կը կարծենք թէ այդ ուժը այսօրու ընէ անդին կրկնապատկուած պիտի տեսնէ, որովհետեւ ապստամբութեան այս վերջին պայթումը որոշուած էր օգոստոս 1ին, սակայն՝ Յոյներու մատնութեանց պատճառաւ՝ կառավարութիւնը կարեւոր անհատները ձերբակալել երբ սկսեց, հարկ եղաւ 8-10 օր աւելի առաջ գործողութեանց սկսիլ Մանասարի նահանգին մէջ, հետեւաբար յուսարի է որ միւս նահանգներն ալ այս երկու օրուան մէջ սկսին միահամուռ շարժում մը որ կրնայ ամբողջ Մակեդոնիան եւ Ա. Պոնտոյ նահանգը

կատարեալ անիշխանութեան մատնելու . Դուրսը պիտու թիւնները անգամ մըն ալ խաբելու համար յայտարարած է թէ պուլկար յեղափոխականները իրենց վերջին ճիգն է որ կը թափեն, ռուսի երեք շարքութեան մէջ ինք կարող պիտի ըլլայ զսպել զանոնք . Մենք գիտենք թէ Դրան յայտարարած զսպելու գործողութիւնը անմիջապէս զայնիւրը կոտորել կը նշանակէ . ինչ որ կացութիւնը աւելի կը ծանրացնէ եւ այս տեսակով պուլկար իշխանապետութիւնը կը պարտաւորուի զինու զօրութեամբ պաշպանել իր ազգակիցները .

Իրաց այս չիֆթ կացութեան հանդէպ մեծ պետութեանց դիրքը զէտ որոշուած չէ, կերեւայ թէ ոչ ալ վերջնային եւ Ռեդիպուլ կ'ի մէջ նոր համաձայնութիւն մը գոյացած . Միայն Ռեդիպուլը կ'ի թերթերը Մանասարի ռուս հիւպատոսին սպանման լուրէն զրգուած ոստիկանական աւելի ապահով գրութիւն մը հաստատել կը պահանջեն ու կըսեն թէ պէտք է ռուս եւ աստիական սպանիւր հրամայեն Մակեդոնիոյ ուստիկանութեան, որպէսզի հիւպատոսներու կեանքը ապահովուի . Երկրի մը մէջ երբ օտար հիւպատոսներու կեանքը ապահով չէ, ալ գիւրդին է հասկնալ թէ անպաշտպան քրիստոնեայ հպատակներու վիճակը ինչ է .

Անգլիոյ Լեքսփ . Ժողովին մէջ բազմաթիւ ժողովականներու հարցումներուն պատասխանելով Մ. Պայֆուր . Մակեդոնիոյ նոր ղեկավարներ առթիւ ցաւ յայտնեց, եւ ըսաւ թէ չը կրնար թուրքիոյ չիֆթութեանց մասին ապահովիչ լուրեր տալ . «Ռուսիա եւ Աւստրիա խնդրոյն մէջ առաջնակարգ շահեր ունեցող պետութիւնները ըլլալով, միւս եւրոպական պետութիւնք պէտք է անոնց օգնեն, որպէսզի առաջիններուն ջանքերը եւ սաստիակական ձգտումը չը վերագրուին . Պէտք է սակայն ընդունիլ որ յեղափոխական խումբերը մեծագոյն արգելքն են Ռուսիոյ եւ Աւստրիոյ ծրագրին յաջողութեան, զոր եւրոպական դաշինքները իրենց բոլոր ուժովը իրականացնել կը ցանկան .

«Անգլիական կառավարութիւնը, ըսաւ նախարարապետը, թուրքիոյ մատնանիշ պիտի ընէ թէ զինուորներու անկարգութիւնը զսպել պէտք է եւ կարելի եղածին չափ պիտի աջակցի անոր այդ նպատակին հասնելու համար .

«Մ. Պայֆուր կը հաւատայ թէ թիւրքիա կը գոյաց, եթէ ոչ մարդասիրական տեսակէտով, զէթ քաղաքական պետքէն մղուած, որ հարկ է իւր զինուորներու անկարգութիւնները արգելել . Դժբաղդաբար անգլիական կա

ուսմանը թիւերը ու եւ հեղինակութիւն չունի ապստամբ խումբերուն վրայ, որոնց նպատակն է անտարակոյս ամէն գնով միջամտութեան հարկադրել Մակեդոնիոյ համար կամ Աւստրիան, կամ Ռուսիան եւ կամ երկուքը միասին։

«Անգլիոյ քաղաքականութեան չը վերաբերիր յաջողութիւն մտադրել ապստամբական շարժումին։ Ընդհակառակը Անգլիա կը փափագի ուժ տալ այս երկու պետութեանց ջանքերուն թուրքիոյ մէջ ներմուծելու համար լաւ վարչութեան մը տարակաճ սկզբունքները, ինչ որ լաւագոյն միջոցն է մերձակայ ապագայի մէջ դադարեցնելու այն խռրոչը ջարիքները որոնցմով կը տառապի Եւրոպայի այդ տարաբաղդ մասը։»

Անգլիոյ նախարարութիւնն այս խօսքերը ցոյց կուտան թէ տրամադիր չէ առայժմ ազդու միջամտութիւն մը ընելու Մակեդոնիոյ խռրոչին, այլ ընդհակառակը Ռուսիոյ եւ Աւստրիոյ կը ձգտէ հարկ եղած ջանքերը ի գործ դնել, չհետեւարար վճռական քայլը Բեղրսպուրկէ եւ Վիեննայէ կապտուի։

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱՆ ՈՒԱԾՆԵՐԸ

Ռուսիոյ Հայ եկեղեցիներու կալուածներու վարչութեան կեդրոնացման մասին հրատարակուած Կայս. հրահանգին քարգեղանքները Ռուսահայ քերթեփաղէի մէջ անուշախոսութեամբ կը ներկայացնեն։

Թագաւոր Կայսրը Ռուսիայում գտնուած հայ-լուսաւորչական եկեղեցու կայքերի կառավարութիւնը պետական հաստատութիւններէ մէջ կեդրոնացնելու եւ յիշեալ եկեղեցու այն զբաղմունքները որ կայքերը, որոնցմով ապահովուած էր հայ լուսաւորչական եկեղեցական զարգացման գոյութիւնը, լուսաւորութեան միջնորդութեան իրաւասութեան յանձնելու մասին միջնորդութիւնները կոմիտէի կայացրած որոշման համաձայն, 1903 թ. յունիս 12 ինքնադրոշման հրամայել հաճեց։

1. Հայ-լուսաւորչական եկեղեցու կայքերը պատշաճաւոր միջնորդութիւններին յանձնելու իրաւորեցին հետեւեալ հիմունքներով, —

(1) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին վարչական, հոգեւոր հաստատութիւններին եւ հոգեւոր զարգացման պատկանող բոլոր կալուածները, ստորիւ (յոյժ 2 եւ նրա ծանօթութիւնը) առաջ բերուած բացառութիւններից զատ առեւել առանձին հաստատութեան հանունը որոշուած կարգով սոյն զաւանթութեան հոգեւորականութեան եւ հոգեւոր հաստատութիւնների ձեռքից եւ յանձնել կարգադրութեան եւ պետական կալուածների միջնորդութեան կառավարութեանը, պահպանելով հայ լուսաւորչական եկեղեցու սեպհական նախնական իրաւունքն այդ կալուածների եւ զբաղմունքների վերաբերմամբ։

(2) Երկրագործութեան եւ պետական կալուածների միջնորդութեան կառավարութեանը պիտի յանձնուին հայ լուսաւորչական եկեղեցու հետեւեալ կայքերը։

(Ա) Ինչպէս բնակուած, նոյնպէս եւ անբնակ հողերը, ինչ անուան եւ

տեսակի էլ որ ինչին դրանք, նմանապէս առանձին անտառները, դաշտերը, արօտատեղիները, ձկնորսարանները ջրաղացները, եւն. . . Սրանից բաց են առնում սակայն գետնի այն տարածութիւնները, որոնք գտնուած են եկեղեցիների, վանքերի, աղօթարանների, տների եւ այլ շէնքերի տակ, որ բոն սծ են առաջնորդարանները, հոգեւոր հիմնարկութիւնները, ինչպէս քաղաքային, այնպէս եւ գիւղական ձեռագործ հոգեւորականութիւնը եւ հոգեւոր զարգացմանը, այն-հոգեւոր, որոնք պարտաւանդու են եկեղեցիներին եւ գերեզմանատներին բնակեցում, եւ վերջապէս, հոգեւորականութեան ձեռքում գտնուած այն հողաբաժինները, որոնց վրայ կան այգիներ, բանջարանոցներ, լինում է վարձուցանք եւ այլն երեք ղէտատնից ոչ աւելի տարածութեամբ իւրաքանչիւր ծխական եկեղեցուն կից, որոնք չեն յանձնում կողմնակի մարդկանց օգտուելու համար, եւ (Բ) Հայ լուսաւորչական եկեղեցիներին, սոյն զաւանթութեան հոգեւորականութեան եւ հոգեւոր հաստատութիւնների պատկանող այն բոլոր տները ու շէնքերը, որոնք հարկաւոր չեն իրեն հոգեւորականութեան եւ յիշեալ հաստատութիւնների բնակութեան եւ անհրաժեշտ անտառութեան համար։

Ծանօթութիւն։ Երկու կանոններին չեն ենթարկուած Ս. Պետերբուրգ եւ Մոսկուա քաղաքներում Հայոց եկեղեցուն պատկանող անշարժ կալուածներն եւ զբաղմունքները։

(3) Կառավարութեան վերոյիշեալ կարգին ենթարկել նաեւ այն կալուածները որոնք զբաղմունքներն են, որոնք այսուհետեւ կը նուիրուին կամ կը կտակուեն յիշեալ հաստատութիւններին օգտին։

(4) Յիշեալ կալուածներին եկամուտներն եւ զբաղմունքների կառավարութիւնը կեդրոնացնել տնային գործերի միջնորդութեան օտար զաւանթութեանց հոգեւոր գործերի գեղարարման համար, որին երկրագործութեան եւ պետական կալուածների Միջնորդ պիտի յանձնէ այդ կալուածների կառավարութեան տեղեկագիր միասին, նրանցից ստացուող եկամուտները, իւր կառավարութեան տակ առած անշարժ կալուածներին տնային գործերը վճարելուց եւ ստորեւ յիշուած գումարները յետ գիւղացուց յետոյ։

Այնուհետեւ ներքին Գործ. միջնորդութիւնը այդ եկամուտները նմանապէս եւ իւր կառավարութեան տակ առած զբաղմունքների տոկոսներից կազմուող գումարներից հանելուց յետոյ, յանձնում է այն հոգեւոր հաստատութիւններին որոնցից սոյն կալուածներն ու զբաղմունքներն ընդունուած են։

(5) Անշարժ կալուածներից ստացուող եկամուտից ամէն տարի յետ է գնում

(ա) 10 (10) տոկոս երկրագործութեան եւ պետական կալուածների միջնորդութեան ձեռքից յիշեալ անշարժ կալուածների կառավարութեան ձեռքերի համար եւ յիշեալ կալուածների բարեւաւման արտակարգ ծախքերը ծածկելու համար, սակայն առանձին պահանջի դրամագլուխ կազմելու համար, եւ (բ) 5 առ 100 ներքին գործերի միջնորդութեան կարգադրութեամբ Հայ լուսաւորչական եկեղեցական հիմնարկութիւնների օմանդակիչ զբաղմունքի կազմելու եւ սոյն եկեղեցու կառավարութեան ընդհանուր պէտքերի համար, այն պայմանով որ սոյն զբաղմունքին կցուի նաեւ վերոյիշեալ (ա) կէտ 10 (10) մասնաբաժնի։

(6) Ի զհետ, եթէ կազմակերպութեամբ հանդես են գնում ինչ


րի մասին, թէ հոգեւորականութեան եւ հոգեւոր հաստատութիւններին տիրապետութեան տակ գտնուած այս կամ այն կայքերն ու զբաղմունքները պէտք է արդեօք կեդրոնացնել կառավարութեան ձեռքի տակ, այս մասին գործը յանձնուած է ներքին գործերի միջնորդի վճռին։

Բ. Յանձնարարել (1) ներքին գործերի միջնորդին (Ա) մշակել հիմնարկներ Հայ լուսաւորչական եկեղեցու օմանդակիչ զբաղմունքից ծախքեր ու ներառել համար հոգեւորական կալուածի հոգեւորականութեան օմանդակիչ զբաղմունքի վերաբերեալ կառուարի նման եւ իւր որոշումներ այս մասին առաջադրելի հաստատութիւն որոշուած կարգով։ Եւ (Բ) սահմանել հոգեւոր հիմնարկութիւնների հաշուետուութեան կարգ նրանց յանձնուած եկամուտները ծախսելու գործում եւ (2) Երկրագործութեան եւ պետական կալուածների եւ ներքին գործերի միջնորդներին, իրենց փոխարար Համաձայնութեամբ օմանդակի (Ա) կանոններ Հայ լուսաւորչական եկեղեցու կալուածներն ու զբաղմունքները յանձնելու կարգի մասին եւ (Բ) կանոններ յիշեալ կալուածները կառավարելու կարգի մասին։

Եւ Գ. Ի փոփոխումն միջնորդների կոմիտէի (նախարարական ժողով) 1898 թ. մարտի 26 ինքնադրոշման հաստատութեան որոշման։

Յանձնարարել երկրագործութեան եւ պետական կալուածների, ներքին գործերի եւ լուսաւորչական միջնորդներին, սոյն որոշման 1 յօդուածի մէջ յիշուած կանոններին հիման վրա Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածներն արգելի կառավարութեան ձեռքն առնելուց յետոյ, յայտնի կացուցանել փոխարար Համաձայնութեամբ այն կալուածները որոնցմով ապահովուէր լուսաւորչական միջնորդութեան իրաւասութեան տակ առնուած զարգացման գոյութիւնը եւ ապա (Ա) ցոյց տալ այն կալուածները որ անհրաժեշտ է թողնել զարգացման անմիջական կարիքների համար, եւ (Բ) որոշել մնացած կալուածների եկամուտների համաձայն, այն զբաղմունքները որոնք չափը, որոնք ամէն տարի պիտի յանձնուին լուսաւորչական միջնորդութեանը, վերոյիշեալ զարգացման պահանջները համար։

ՄԵՐ ԴՐԱՑՈՒՆԵՐԸ



Լ Ի Բ Ա Ն Ա Ն

Լիբանանու անուրը անմասնօք չէ Հայոց, զայն իմացած ենք Ս. Գրքին, որով եւ քաղցը կը հնչէ ակամօքնուանոր յիշատակութիւնը։ Բայց այսուրեւայ Լիբանանը տարբեր է Ս. Գրքի պատմական Լիբանանէն, այն ասին մեծ էր, հզոր էր, նշանաւոր էր իւր մայրենի ու մեծ անտառներովը, եւ հոն կը բնակէր ժողովուրդ մը զոր Ասորի կը կոչէին եւ որ մեծ դեր խաղացած է աշխարհի քաղաքակրթութեան մէջ, իսկ այսօրեւայ Լիբանանը պղտկեցած ու տկարացած է. բաժնուած է քաղաքակրթեալ եւ վայրենի տարբերութեամբ, — Հարաւ-Արեւելեան մասը «Տիւրքի տաղը» եւ արեւմտեան մասը «Թաթարական լիւններ» անուան տակ կը ճանչցուին, — մնացած է «Կիլիկիական Լիբանանը» միայն հարազատ ժառանգորդ իւր պատմական անուան։ Կղզիացած է Թուրք տիրապետութեան մէջ, քաղաքակրթական անուրը անմասնօք չէ Հայոց, զայն իմացած ենք Ս. Գրքին, որով եւ քաղցը կը հնչէ ակամօքնուանոր յիշատակութիւնը։ Բայց այսուրեւայ Լիբանանը տարբեր է Ս. Գրքի պատմական Լիբանանէն, այն ասին մեծ էր, հզոր էր, նշանաւոր էր իւր մայրենի ու մեծ անտառներովը, եւ հոն կը բնակէր ժողովուրդ մը զոր Ասորի կը կոչէին եւ որ մեծ դեր խաղացած է աշխարհի քաղաքակրթութեան մէջ, իսկ այսօրեւայ Լիբանանը պղտկեցած ու տկարացած է. բաժնուած է քաղաքակրթեալ եւ վայրենի տարբերութեամբ, — Հարաւ-Արեւելեան մասը «Տիւրքի տաղը» եւ արեւմտեան մասը «Թաթարական լիւններ» անուան տակ կը ճանչցուին, — մնացած է «Կիլիկիական Լիբանանը» միայն հարազատ ժառանգորդ իւր պատմական անուան։ Կղզիացած է Թուրք տիրապետութեան մէջ,

բայց չէ կղզիացած աշխարհի քաղաքակրթութիւնէն. իւր զաւակներէն մաս մը ուսեալ ու կրթուած, ցրուած են աշխարհի զանազան վայրերը, ծանօթ են եւրոպական քաղաքակրթութեան։

Այդ պատմական լուսն վրայ բնակող ժողովուրդը այսօր «Մարոնիթ» կը կոչուի, կրօնքով քրիստոնեայ եւ կաթոլիկ, աւելորդ չըլլաւ կրթութեանը թէ քիչ մըն ալ մտնանա՞յ, այսինքն Պապէն աւելի պապական, Կան մէջերն հին Ասորիներ ալ, յոյն-օրթոտոքսներ եւ բողոքականներ, վերջին տասը տարիներու մէջ, դէպի Ամերիկայ բացուած գաղթականային հոսանքը բողոքականութիւնն ու ազատամտութիւնը զարգացուց երկրին մէջ։

Լիբանանի արաբներն է. իսկ գաղղիներն ալ սովորական լիբանան չափ կը գործածուի իրենց մէջ. վերջին տարիներս անգղիներն ալ ընդհանրացաւ շնորհիւ Ամերիկայի. իսկ եկեղեցական արարողութիւններն գեո հին ասորիներով կը կատարուի, ո՛չ արաբներն ո՛չ ալ լատիններն կըցան աւտորիտը բռնել։

Արաբները, եգիպտացիները եւ Թուրքերը տիրեցին ասոնց ալ երկրին, քրիստոնէութիւնը հոս ալ շատ հալածանք քաշեց Մահմետական բռնութեանէն. բայց չյաղթուեցաւ, որովհետեւ այս երկրին մէջ ինչպիսիքները արշաւեցին քանիցս անգամներ, ցուցուցին արեւմտեան քրիստոնեաներու զօրութիւնը եւ պաշտպանութիւնը. Նափօլէոն առաջինը ֆրանսական առքով ու փառքով եկած այցելած է իրենց երկրը. Արաբի պաշարման միջոցին, բանակցած է իրենց պետերուն հետ խոշոր ծրագրի մը վրայ, թէ Արաբն առնելն յետոյ, անոր մէջը գտած դէնքերովը պիտի զինէր Լիբանանու կրօնները եւ քաղէր ցամաքի ճամբայով Գ. Պոլսոյ վրայ, ուր պիտի հիմնէր քրիստոնեայ թագաւորութիւն մը ֆրանսական պաշտպանութեան տակ. այսպէս մահմետական տիրապետութեան սկսեալ, քրիստոնեայ եւրոպան մերթ ընդ մերթ այդ երկրը այցելած ըլլալով Լիբանանցիները քաղաքակրթական ու յուսացին եւ համբերութեամբ ստանդով մահմետական երկարատեւ հալածանքները, պահեցին քրիստոնէութիւնը, միշտ ձեռքերնին երկնցուցած դէպի Արեւմուտք, գոչելով «Պրանսա»։

1855 թուականին, Եւսուֆ Քարամ անունով հարուստ գերդաստանի մը զաւակ, ուսեալ ու ազատամիտ, ինքզին կը փորձէ իւր նախահայր համբերութեան անմայր շղթան, արեւմտեան քրիստոնեաներուն զաւաճման սպասելու անվերջ յոյսերը, ինքը ձեռնամուկ կըլլայ Թուրքերը վառելու ու երկրը փրկելու ազատարար պաշտօնին կատարման։ Սկիզբի փորձերուն մէջ գործը անյաղդ կերթայ ու զորք-Թուրք կը վառվարանայ անախկալ արգելքներու կը հանդիպի, որոնց ամենազօրաւորը կըլլայ երկրին փրկութիւնը Պրանսացիներէն սպասելու հըզօր ու արմատական նախապաշարունքը որ կը տիրէր Լիբանանցոց մարիններէ, եւ որ աւելի վնասակար կը թուէր Գարամին քան թրքական դուռներն ու թիւերն։ Հինգ տարի մղած է Գարամ սպառնալուքներն սուր կռիւներ, բայց չէ կրցած շատ կողմնակիցներ ունենալ. կղեր, ծերերն ու հարուստները չեն միացած իրեն եւ գրեթէ միշտ հակադրուած են, երեստարգներէն աննշան փոքրամասնութիւն մը կողմնակից կամ աւելի լաւ՝ ըսելով պիտուար ունեցած է, իրեն ամենավեժ խուճը 500 հոգին չէ անցած, օրինակ կըր «Ղապի» ըսուած գիւղին առջեւ

Թրքական 15 հազար զինուորականներ
յայտնված են, թիւերն են այդքան էր
միայն բայց չնորհիւ գերբերնուն որ
լեռնային եւ անառիկ է, իրենք ալ
կարծեալ եւ քաջ ըլլալով, կրցած են
զինամուկ երկար տարիներ: Շատ քա-
ջեր վայրած են իրենց մէջ, եւ ժողո-
վրդին ուշադրութեան ու գովասանքին
արժանացած են: Մէկը, կատարու-
թեանն բորբոքած, արհամարհելով հա-
գարաւոր զնապահներու վզովը վա-
զած է թրքական ընկեր, թիւերն ու-
թաձիգը գնատակարար ընկերով, շաղկա-
ծ է թիւերն ուսին եւ փախած է իր
խմբին մէջը անվտանգ, սարսափ ու
յուսահատութիւն ձգելով թշնամի բա-
նակին մէջ եւ քաջալերութիւն ներշնչ-
չելով իր ընկերներուն: Մինչեւ 1860
թուականին թուրքը իր վայրենու-
թիւնն ու սկզբութիւնը անգամ մը
եւս ցոյց տալու համար՝ Դամասկոսի
խաղաղ քրիստոնեաներէն իր վրէժը
լուծել ուղից, ու հոն անդուծ կո-
տորած մը կազմակերպեց որ տարի
տուաւ Նափոյէն Գ. ին ֆրանսական
զորանոցները Պէյրութի առջեւ շա-
րկու եւ ֆրանսական զինուորները
ցամաք պարպելու, որով Լիւանանը
ազատուեցաւ վերջնականապէս թրքա-
կան լուծէն:

Այսօր Լիւանանը անուանապէս Թուր-
քիոյ գերիշխանութեանը տակն է՝ մի-
այն կուսակալը Բ. Դրոսը ընտրութեամբ
կը խրկուի քրիստոնեայ ըլլալու պայ-
մանաւ, եւրոպական վեց պետութեանց
հաւանութեամբ, կառավարութեան
մնացեալ ամբողջ կազմակերպութիւնը
տեղացիներէն է եւ ժողովուրդի ընտ-
րութեամբ. զինուոր չունին, փոխառով
կը կառավարուին: զստիկանները
կուրծքերն կարմիր «քայթանով» ու
խաչ կը կրեն:

Չունին տառանորդ, եւ թրքական
զանազան ծանր տուրքեր. մարդա-
պուլ տարեկան 8 դր. 30 փր. տուրք
կը վճարեն՝ ներքին կազմակերպու-
թեան ծախսերը գոցելու համար, ու-
րիշ սէնչ:

Օրէնքներն խիստ կը գործադրուի,
անգործութիւնը երկրին ամէն կողմը
կը տիրէ, կենաց, պատուոյ եւ ինչ-
քեւ ապահովութիւնը կատարեալ է,
միայն խղճի ու խօսքի ազատութիւնը
սպառնաւոր չափ չէ. եւ մաքրատու-
նիւր թրքաց կը պատկանին՝ տեղացի-
ներու հակադրութեան ու պահպանու-
թեան տակ:

Ազատուելով սուլթանական լուծէն,
Լիւանանցիները անզգայապէս ուրիշ
բնապետի մը ճանկերուն մէջ բռնուե-
ցան, այսինքն կաթոլիկ կղերին, որ
առիթուն օգտուելով, Նափոյէն Գ. ի
զուտ մարդասիրական ձեռնարկը կրօն-
քի ու կաթոլիկութեան ազդեցութեան
վերադրեցին, եւ կապեցին ու շղթա-
յեցին Լիւանանցիին Հռոմայ սթոպին
ոտքերուն: Լատին միսիոնարները ան-
թիւ վանքեր ու գաղտնիքներ հիմնեցին
եւ Լիւանանցոց զաւակները խլիցին
իրենց ծնողքէն, անոնց խիղճն ու
զգացումները գողցան, ազատութեան
տեղ Հռոմ սորվեցուցին եւ մարդկու-
թեան ու ազգութեան սուրբ զգացում-
ները խեղդեցին ու սպաննեցին այդ
անմեղ երախտներուն սրտին մէջ:

Միւս կողմէ նոյն սահմանափակ ա-
զատութիւնը որ աւելի կրօնական տե-
սակէտով կրօնական քան անտեսական
ու յառաջդիմական, իրենց գոհացում
պատճառեց, որով գրեթէ քառորդ
գար մը յեղափոխութեան ու յառաջ-
դիմութեան ոգին իրենց մէջ թմրած
մնաց, մինչեւ որ ժողովուրդը շատ-
շատաւարով եւ երկիրն արդէն սահմա-
նափակ ըլլալով, սկսաւ անտեսական

տաքնապը տիրել. զգոհութիւնները
չառցան, որուն ընական հետեւանքն
էր յեղափոխութեան արթնացումը, որ
հակադրութիւն կը յառաջանար. երբ Ա.-
մերիկայի ճանապարհը իրենց համար
յայտնուեցաւ եւ ուշադրութիւնն այն
կողմը դարձաւ որով յեղափոխութիւնը
հարուած մը կերաւ ու տանակալ տա-
րիներէն քնացաւ:
Ճիշտ յայտնի չէ թէ որքան ժողո-
վուրդ գաղթած է Ամերիկա, ունիք
գաղթողներու թիւը մինչեւ 8) հազա-
րի կը հասնի, բայց չափազանցու-
թիւն է. հմուտ անձնաւորութիւններ
ատուր կէտը կը կարծեն: Ամերիկայի
հասանքը թէեւ տեսակէտով մը յեղա-
փոխութիւնը սպաննեց Լիւանանցոց
համար, սակայն ուրիշ կողմէն նոր
ծնունդ տուաւ այդ ժողովուրդին:
զայն կրթեց, անոր աչքը բացաւ ու
ազատութեան ու յառաջդիմութեան
յարգը զգացուց անոր. Լիւանանցի
գաղթականներ յեղ. թիւերը հիմնեցին
Ամերիկայի մէջ, գլխավոր սկզբունք-
ներու վրայ հիմնուած մեծ կուսակ-
ցութիւններ կազմեցին, եւ յեղափո-
խութիւնը իրական ու արմատական
յեղափոխութիւնը այսօր սկսաւ իրենց
մէջ աւելի քան երէք:

Ճանաչականներն այժմ՝ բարեփոխած
է, Ամերիկայ գաղտնիքը շատ յաջող
կը դառնան. առեւտուրի մէջ շատ
ճարպիկ են. երկրին մեծագոյն ար-
տադրութիւնը մետաքս է եւ զանազան
պտուղներ: Մերենը կիլիկիայէն կուսա-
նան, շատ առաջատանաւոր ունին,
եւ հմուտ են նաւարկութեան. Կիլի-
կիոյ նաւահանգիստները կերթան,
Սուէսից, Իսթանբուլ, Մէքսիկո,
զանազան ապրանքներու վաճառակա-
նութիւն կրնան, մասնաւորապէս ցո-
րեն կը գնեն այդ տեղերէն:

Հայկական փոքր գաղթականութիւն
մըն ալ ունեցանք հոն. 95ի կոտո-
րածներու միջոցին կիլիկիայէն քանի
մը հայ ընտանիքներ հոն գաղթեցին
եւ երկիրը հանրապետ ու ապահով գո-
նելով հոն հաստատուեցան. նշանաւոր
վանք մը ունինք հոն, «Ս. Սնտոն»
անուանով, որ Զմեմարայ ըստած լեռան
վրայ, Պէյրութէն 16 փրովթը դէպի
հիւսիս, ծովէն 1500 փոքր բարձրու-
թեան վրայ հիմնուած է. չէնք՝ հո-
կայութեան եւ գեղեցիկութեան տեսա-
կէտով առաջիններէն է. շատ ազա-
րակներ եւ անտառներ ունի:

«Ս. Սնտոն»ը Պապական Հայոց կը
պատկանի. չեմ գիտեր որ թուակա-
նին եւ ինչպէս հիմնուած է. բայց
Հատուկաններու վէճին առթիւ գոց-
ուեցաւ ու միաբանեց լուսաւորեցան,
եւ երկար ատեն գոց մնաց. 95ի դէպ-
քէն յետոյ որքանոց մը բացուեցաւ
տնոր մէջը, եւ այսօր քանի մը տասն-
եակ հայ որբեր հոն կրթութիւն կա-
նեն:

ՊԱՂԱՍԻ

Անահիտ

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ

ՍԻՆԻՍՏԻՆ, 28 Յուլիս

Խմբագիր

Մեծաւ տիւր ժող կը կարգու-
ուի ձեր պատուական թերթի
այժմեան թերթին՝ ՀԱՍՍԱՐԱԿԱՍ
ԴԱՍՍԱՍՏԱՆԻՆ զոր սկսած էք
հրատարակել, որոյ համար կը
փութուք Նոյիսի մեր շնորհակա-
լիքներն:

Կարգւոյք, ինչ նման խոր-
ուող բոլոր Հայ եղբայրներ, եր-

րեմի Պատկաստունի մէջ կարու-
ծատէր (1) (**) կարծեցեալ Նազար.
բեկ հրէշը, ոչ թէ միայն մէկ
կուտ չունի եղեր, այլ նոյն իսկ
բարոյականի նշոյն. եղած է առ-
հաւարակ բոլոր ժամանակի աւե-
րակի ծնունդ գիտնաւոր մը,
որ որ եղեր ու պատգար է, տա-
րած է իրեն հետ սոսկոյի տնա-
ւոր կառութիւնն ու ազգակործան
տեսութեան թիւն: Վա՛յ քեզ, հայ
ժողովուրդ, որ այս նման արա-
րած երու. թող տուած ես քեզ
առ ջուրդիւր:

Հիշակահոյթիւնը երբ իւր
փառքի նատիրին վրայ կը տապ-
տկէր, այն ատեն Ապուսկ անուն
փողոցային թերթով մը կը ներ-
կայուէր ինքիցէն. այժմ այ
իւր հրգիւսարքը «Վերածնունդ»
թէ Հեռածնունդ» թերթով մը,
զոր Բուստուքի մի քանի շոյթ-
ներ կը մրտեն: Մեք Սիլիստրի.
ցիքս գարշաճօք մեր ժողովրդ. եւ կը
յուսանք թէ ամեն տեղի ողջամիտ
«Վերածնունդ» ու նոյնը ըրած լիւրու-
ն:

Իւր կը լսե՛ք թէ, պուլկա.
բահայոց կողմանէ յայտնի խաչա-
զող մը այս օրերու Լոնտոն զի կու-
նէ թագաւորի մասնակցելու, որ
Աւօն (Նազարբէյ) գործի զուլի
բարձր ցնեն, որպէսզի ինչ չարիք
որ սուրբ շրջանին պակաս թո-
ղուցած էր ազգին գլխուն թափե-
լու, այժմ զայն ամբողջացնէ:

Եղբայրներ, ա՛յ բաւ է. ի՛նչ
որ խաբուեցանք զառնազգեստ
գալիւրէ:

Քիչ ա՛յլ «չք ունենա՛ք տեսնե-
լու. եւ ահա՛ լսե՛ց. ժողովուրդ ծներն
լսելու:

Հիշակահոյթի խոյլ հոսանքը
հոս ու հասած է Պատրիարքական
Փոխանորդ հօր նկատմամբ: Մեք
այ անյարմար կը գտնենք ինչեւալի
առաջնորդութիւն. զի իւր հրմ-
տութիւնն եւ քաղաքագիտութիւն
խտացած են լոկ տափակ շոյթ-
քորթութեան շուրջ: Արդ քանի
որ «Վերածնունդ» մը ունենալու փա-
փազն իրականանալու հաւանակա-
նութիւնը կայ, լաւ է որ հպիս-
կոպոս մը ունենանք առնացի նը-
կարագրի տէր եւ լիզուազէտ:

Վահան վարդապետ, պիտի ջո-
նայ եպիսկոպոստանալու: Արդ ան-
տեղի ծախքը մեր վրայ պիտի
ծանրանայ, սա՛ մէկ անտեղու-
թիւն (2): Երկրորդ՝ տարազգի-
ներու հետ թաղաւանով խօսելու
ծիծաղիլի դրութիւնը այդքէն վա-
ղուց պատմութեան յանձնուած է.
որն որ ազգէն համար ու ապուստ

(1) Իւր խաչագող ներկայացուցիչ-
ները միւր կը խաբէին թէ իւր քսակէն
10 հազար ոսկի մագած է Ս. գործին:

(2) Ս. Վահան վարդապետ եպիսկո-
պոստանալու համար հարկ եղած ծախքին
քանի մը պատիւը իր սեփական կալ-
ուածներով կարող է վճարել:
Դիտ. Խմբ.

ուսերն է (3). որով յանձին վահան
վարդապետի կատարուած ընտրու-
թիւնը ձեռնող նկատելու մեծ ի-
րաւունքը կը վայելե՛ք. ինչու կը
լաւ հայ մամուլը ու ձայնը չի
բարձրացնէր այս մասին:

Հին Հնգակն ՄԸ

ԱԶԳԱՅԻՆ

Բեղերու. վերադարձի ուս
թիւը կը գրէ թէ վեհ. կաթո-
ղիկոսը որոշած է քաջուր լերու-
սաղէմի վա՛քը: Վեհնայի թեր.
թիւն ալ նոյնը կը գրեն ու կաւե-
ցնեն թէ Հայոց կաթողիկոսը ձե-
րութեան պատճառաւ իր հրաժա-
րականը պիտի զրկէ ըստ սովորու-
թեան կովկասի կառավարչապե-
տին եւ ներքին գործոց նախարա-
րին: Այս մասին Պատրիարքարա-
նը ու է տեղեկութիւն չէ ստացած:

Մեք այս լուրը անհաւանական
չենք գտնել, նկատելով թէ ուս
կառավարութեան վերջին ոտնձը-
գութիւնները ծանրապէս ազգած
պիտի ըլլան Հայրիկին զգացումն.
բուն վրայ, որ այլեւս չը կրնար
հանդուրժել իր գահակալութեան
օրերուն մէջ ազգային դարաւոր
իրաւունքները արքի տակ տալու:

— Պոստի թերթերուն մէջ կը
կարգանք հետեւեալը.
«Պոստի Պատր. փոխանորդ
Ս. Վահան Ս. Վ. Թաղապետ իր
վերահիւս քահանայից թուոյն եւ.
նոնց պաշտօնավարութեան մասին
տեղեկագիր մը զրկած էր, յայտ-
նելով միւս կողմէ թէ Սիլիստրի եւ
Ռուսուգ առանց քահանայի մնա-
ցած են: Ժողովը որոշեց Ռուս-
ուգի մէջ անպաշտօն գտնուող Ս.
Գեորգ քահ. հաստատել տեղւոյն վը-
րայ, եթէ արգելիչ պատճառ մը
չկայ մէջտեղ, իսկ Սիլիստրիէն
անհրաժեշտ փէօստէնձէ մեկնած Ս.
Արիստակէս քահ. Ֆէօդանի մասին
բացատրութիւն պահանջել»:

— Զմեմարայ առաջնորդական
ընտրելի նշանակուած Բարթողե-
մէոս եւ Միսրոպ չարքապիկոպոս-
նելը ինչպէս նաեւ Ս. Հմայեակ եւ.
պիսկ. հրաժարած են. եւ Պատ-
րիարքարանը որոշած է ուրիշ եւ.
աւանու ցանկ մը պատրաստել:

— Ռուսահայ եկեղեցիներու եւ
զանքերու կալուածներու վերա-
բերեալ հիւսմանագրին համեմատ
Ռուսիոյ ներքին գործոց նախա-
րարը հեռագր. եր է Էջմիածնայ Սի-
նդիս, որ Մարթ-Աթոռոյ եւ գա-
նազան եկեղեցիներու եւ վանքերու
կալուածներն ու հանքերը ուրիշ
չվարձեն, այլ սպոսեն նախարա-
րութիւնէն գալիք պաշտօնագրի.

(3) Ազգի մը ներկայացուցիչը՝ եթէ
օտար լեզուներ ալ գիտնայ՝ ընդհանուր
սովորութիւն է որ թարգմանի միջո-
ցաւ խօսի:

Դիտ. Խմբ.

Печатница Взаимность Варна.